«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» հոկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-07/13 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ ֆինանսների նախարարի 02.04.2012թ. N 1 պաշտոնական պարզաբանմամբ և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 31.07.2013թ. թիվ 09/032-1061 գրությամբ դիմել «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն 09.08.2013թ. թիվ 294 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքվել է ապրանքի գնման ՍԸԱՊՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի ընդհանուր գումարը կազմել է 42313900 ՀՀ դրամ, չկնքված մասի գումարը՝ 4600000 ՀՀ դրամ, որը և հանդիսանում է «Ավտոկլավ MELAG Vacuklav 44-B», իսկ նրա անքակտելի մաս հանդիսացող «MELA FOL» մակնիշի գլանափաթեթների մատակարարման համար կնքվել է թիվ 2 համաձայնագիրը, որի գումարը կազմել է 780000 ՀՀ դրամ:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը չէր նախատեսել ձեռք բերել «Ավտոկլավ Melag Vacuklav 44-B», իսկ «MELA FOL» մակնիշի գլանափաթեթները համարվում են ավտոկլավի անքակտելի մասը և առանձին մատակարարում իրականացնել հնարավոր չէ և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն 06.12.12թ. թիվ 258 գրությամբ առաջարկել է Պատվիրատուին մատակարարել համարժեք «Եռունդա»

մակնիշի գլանափաթեթներ կամ խնդրել է երկկողմանի լուծարել թիվ 2 համաձայնագիրը:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն տեղեկացրել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.02.2013թ. ԴՎԱ/332 գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ հաշվարկելով տույժ և տուգանք 4515050 ՀՀ դրամի չափով, որից 4231390 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10% չափով:

Ընկերությունը նշել է նաև, որ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն կնքել է տուժանքի մասին համաձայնագիր Պայմանագրի ընդհանուր գումարի 10% չափով՝ պատրաստ լինելով մատակարարել գլխավոր պայմանագրի ողջ չափաբաժինները:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն գտնում է ՍԸԱՊՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագրի խախտում կատարվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ չկնքելով ավտոկլավի մասով համաձայնագիր և/կամ չլուծելով Պայմանագիրը ավտոկլավի մասով, բացի այդ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն տեղեկացված չի եղել, որ Պատվիրատուն ավտոկլավ ձեռք չի բերելու և հետևաբար կնքել է թիվ 2 համաձայնագիրը:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինս պատրաստ է վճարել տույժը ու տուգանքը չմատակարարված թիվ 2 համաձայնագրի գումարի մասով:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 31.07.2013թ. թիվ 04/032-1056 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.08.2013թ. ԴՎԱ/2480 գրությամբ խնդրել է «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հաշվի առնելով ՀՀ պաշտպանության

նախարարության հետ երկարամյա համագործակցության ընթացքում Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

4. ՍՑ-ԳԲԽ-07/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքվել է ապրանքի գնման ՍԸԱՊՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագիր:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի սեպտեմբերի 25-ին կնքվել է համաձայնագիր N 2, որի ընդհանուր արժեքը կազմել է 780000 ՀՀ դրամ:

3. Պայմանագրի N 2 համաձայնագրի հավելված N 1-ով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել են «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից երկու առանձին տեսակի՝ ստերիլիզացիոն գլանափաթեթ մեծ չափերի MELA FOL և ստերիլիզացիոն գլանափաթեթ միջին չափերի MELA FOL ապրանքների մատակարարում, որոնց մատակարարումը պետք է իրականացվեր 2012թ. երրորդ եռամսյակում՝ սեպտեմբերին:

4. «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն 06.12.2012թ. թիվ 258 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և առաջարկել է Պատվիրատուին մատակարարել համարժեք «Եռունդա» մակնիշի գլանափաթեթներ կամ երկկողմանի լուծարել թիվ 2 համաձայնագիրը:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունը ***07.02.2013թ.*** ԴՎԱ/332 գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ Պայմանագրի 3.1.6 կետի 3.1.6.1 ենթակետի «ա» և «բ» պարբերության հիմքով:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով պաշտոնական ընթացակարգով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է բողոք:

7. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 26.07.2013թ. թիվ 20/394 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***19.12.2012թ.*** հայտ է ներկայացրել «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն՝ կցելով հայտի պատճենը:

5. ՍՑ-ԳԲԽ-07/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի 09.08.2013թ. թիվ 294 գրությամբ ներկայացված կարծիքը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2013թ. ԴՎԱ/2480 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքված ՍԸԱՊՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքված ՍԸԱՊՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագիր 1.1 կետի

համաձայն՝ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն պարտավորվել է նույն պայմանագրով և նրա անբաժանելի մասը հանդիսացող գնման ժամանակացույցով սահմանված կարգով, նախատեսված քանակներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 2 հավելվածով՝ տեխ-նիկական բնութագրով նախատեսված տեսակի և որակի ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 3.4.2. կետով սահմանվել է, որ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն պարտավոր է ապրանքը Պատվիրատուին մատակարարել նույն պայմանագրին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 3.1.6 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակող-մանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում,

բ) բազմիցս խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի սեպտեմբերի 25-ին կնքվել է համաձայնագիր N 2, որի ընդհանուր արժեքը կազմել է 780000 ՀՀ դրամ:

Պայմանագրի N 2 համաձայնագրի հավելված N 1-ով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել են «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից երկու առանձին տեսակի՝ ստերիլիզացիոն գլանափաթեթ մեծ չափերի MELA FOL և ստերիլիզացիոն գլանափաթեթ միջին չափերի MELA FOL ապրանքների մատակարարում, որոնց մատակարարումը պետք է իրականցվեր 2012թ. երրորդ եռամսյակում՝ սեպտեմբերին:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել N 2 համաձայնագրի հավելված N 1-ով՝ գնման ժամանակացույցով, սահմանված երկու առանձին տեսակի ապրանքները:

«ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորություն-ները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական կառավարման մարմիններին, Երևանի քաղաքապետարանին ուղղված 31.07.2013թ. թիվ 1/13.1/11347-13 շրջաբերականով հայտնել է, որ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը թույլ տալու օրվանից, այսինքն՝ 15.03.2012թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում:

Հայտնում ենք, որ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը թույլ տալու օր է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքված Պայմանագիր լուծման օրը, այն է՝ ***07.02.2013թ.***:

Պետք է նշել, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը որևէ տեղեկատվություն չի ստացել «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***07.02.2013թ.-ից,*** հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը Ընկերությանը հանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում թույլ տված մասնակիցների ցանկից:

Ինչ վերաբերում է Կենտրոնում առկա այն տեղեկատվությանը, որ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով, ապա հայտնում ենք, որ վերը նշված հայտը «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ***19.12.2012թ.***, այսինքն մինչև Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում թույլ տալը, այն է՝ ***07.02.2013թ.***:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «ՆԻԲ ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01511927) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ՝ ՍՑ-ԳԲԽ-07/13 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան